ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/99

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից 26.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանը ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանը 26.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«23.07.2018թ. Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի (այսուհետ՝ նաև Ա/Ձ) կողմից հայտ է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարված ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2 չափաբաժիններին մասնակցելու համար:

31.08.2018թ. կայացել է թիվ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդը, որին Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանը չի կարողացել մասնակցել «gnumner.am»

համակարգում Ա/Ձ-ի անձնական էջ մուտք գործելու գաղտնաբառն արգելափակված լինելու պատճառով:

03.09.2018թ. Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից դիմում-բողոք (այսուհետ՝ Բողոք) է ներկայացվել ՝ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Ի պատասխան Բողոքի ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի կողմից 17.09.2018թ. ներկայացվել է թիվ 01.126-2/16880-18 գրություն (այսուհետ՝ Գրություն), որում ներկայացվել են բողոքում նշված փաստարկների պատճառաբանված հակափաստարկներ:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձի կողմից Բողոքի քննությունն իրականացվել է Օրենքի պահանջի ակնհայտ կոպիտ խախտմամբ ինչը հիմնավորվում է ներքոհիշյալ պատճառաբանություններով:

1. Գրության մեջ նշվել է հետևյալը «Ի պատասխան Ձեր 05/09/2018 և 06/09/2018թ. գրությունների հայտնվում է....»: Այս կապակցությամբ կարևոր եմ համարում բողոքը քննող անձին տեղեկացնել, որ 03.09.2018թ. Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է «Դիմում-բողոք», այլ ոչ թե «Գրություն» նշված վերտառությամբ փաստաթղթերն իրավական առումով միմյանցից էականորեն տարբերվում են: Բողոքը քննող անձը Բողոքը քննել է, ոչ թե բողոքների քննության սահմանված կարգով, այլ ուղղակի ներկայացրել են սովորական պատասխան՝ պատճառաբանված «Որոշում» կայացնելու փոխարեն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի՝

• 3-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը չի բավարարում սույն հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել սույն հոդվածի պահանջները, ապա սույն մասով սահմանված ժամկետում շտկված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

• 4-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ

քննող անձին ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

• 5-րդ կետի համաձայն՝ բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

• 6-րդ կետի համաձայն՝ բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

• 7-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. (ենթակետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-259-Ն)

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

• 9-րդ կետի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

• 10-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

• 11-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում կայացնելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում որոշումը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում կայացված որոշումը սույն մասով սահմանված ժամկետում ուղարկվում է պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ որոշումը պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին ուղարկելուն հաջորդող օրը:

Հիմք ընդունելով նշված իրավանորմի դրույթները, ապա ակնհայտ է, որ Բողոքի քննությունը իրականացվել է Օրենքի պահանջի ակնհայտ կոպիտ խախտմամբ, այն է՝ Բողոքի վերաբերյալ չի կայացվել պատճառաբանված գրավոր որոշում, Բողոքի քննության նպատակով չի հրավիրվել նիստ և դրան մասնակից չեն դարձվել կողմերը, հետևաբար Ա/Ձ-ն զրկված է եղել իր տեսակետները ներկայացնելու և հիմնավորելու օրենքով վերապահված իրավունքից:

Սույն կետում նշված հանգամանքներն իրենցով իսկ արդեն լիովին հիմք են հանդիսանում հաստատված համարել առ այն, որ բողոք քննող անձը Բողոքը քննության չի իրականացրել ըստ էության և կարելի է հաստատապես նշել, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված Բողոքն իրավասու անձի կողմից անտեսվել է և պատշաճ ընթացակագի իրականացմամբ այ կապակցությամբ չի կայացվել գրավոր որոշում: Այսպիսով, ստացվում է, որ 03.09.2018թ. Ա/Ձ-ի կողմից ներկայացված Բողոքի կապակցությամբ այդպիսի որոշում առկա չէ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր

պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն: Իսկ նույն օրենքի 50-րդ հոտվածի 6-րդ կետի համաձայն՝ բողոքների վերաբերյալ կայացվում է գրավոր որոշում:

Բողոքի քննության հետ կապված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի պահանջների խախտումներն իրենց հերթին հիմնավորում են նույն օրենքի 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջները բողոքը քննող անձի կողմից պահպանված չլինելու հանգամանքները:

Անդրադառնալով Գրության մեջ նշված փաստարկներին, ապա դրանք լիովին անհիմն են հետևյալ պատճառաբանություններով.

Գրության մեջ նշված է. «Գայանե Կիրակոսյան Ա/Ձ օգտատիրոջ «gayan1980» մուտքանունով 29.08.2018թ. ժամը 20:57-ից մինչև 29.08.2018թ. ժամը 21:00 Armeps համակարգը արձանագրել է մուտքի 14 փորձ, որի արդյունքում համակարգը ավտոմատ ապաակտիվացվել է «gayan1980» օգտատիրոջ կայք-էջը՝ ինչի մասին նշված է համակարգի «Օգնություն» բաժնի տնտեսական օպերատորի օգտվողի ձեռնարկում» և ներկայացվել է «աուդիտ հաշվետվություններ»՝ որպես իրենց փաստարկները հիմնավորող ապացույց:»:

Նախևառաջ Բողոքում Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից նշվել է. «29.08.2018թ.-ին armeps.am կայքով էլեկտրոնային գնումների Ա/Ձ-ի անհատական էջ մուտք գործելու ժամանակ էկրանին հայտնվել է հետևյալ հաղորդագրությունը՝ «Ձեր հաշիվը փակված է: Խնդրում ենք դիմել համակարգչային անդմինիստրատորին info@armeps.am», առաջին իսկ մուտքագրումից հետո հայտնվել է այդ հաղորդագրությունը: Ա/Ձ-ի կողմից անմիջապես նամակ է ուղարկվել նշված էլեկտրոնային հասցեին՝ առաջացած խնդրի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար: Հաջորդ օրը Ա/Ձ-ն զանգահարել է էլեկտրոնային գնումների բաժին, որտեղ պատասխանել են, որ գաղտնաբառը սխալ հավաքելու արդյունքում ապաակտիվացվել է և ընդհանուր բաժնից պետք է նամակը մակագրվի իրենց, որ նոր միայն շտկեն առաջացած խնդիրը: Մեկ օր սպասելուց հետո կրկին հեռախոսազանգի միջոցով Ա/Ձ-ն փորձել է տեղեկանալ ինչ ընթացք է ստացել

նամակը, սակայն պատասխան է ատացվել, որ դեռ նամակը իրենց չի հանձնվել: 31.08.2018թ. վերը նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար փորձելով կրկին մուտք գործել անհատական էջ, սակայն չի հաջողվել, որի հետևանքով Ա/Ձ-ն չի կարողացել մասնակցել վերը նշված աճուրդին:»

Այս կապակցությամբ Գրությամբ ընդհանրապես որևէ հիմնավոր պատճառաբանություն չի ներկայացվել, այլ միայն նշվել է, որ արձանագրել է մուտքի 14 փորձ, որի արդյունքում համակարգը ավտոմատ ապաակտիվացվել է և ներկայացվել է աուդիտ հաշվետվություններ: Գաղտանաբառը արգելափակվել է 29.08.2018թ. Ա/Ձ-ի կողմից առաջին անգամ մուտքանունը և գաղտնաբառը մուտքագրելուց հետո, այլ ոչ թե 14-րդ փորձից հետո: Այս հանգամանքը լիովին անտեսվել է բողոքը քննող անձի կողմից և այդ կապակցությամբ ընդհանրապես հիմնավոր պատճառաբանություն և ապացույց չի ներկայացվել: Իսկ Գրության մեջ նշված այն փաստարկը, որ գաղտնաբառը ապաակտիվացվել է 14-րդ փորձի արդյունքում, հայտնում եմ, որ Բողոքին կից ներկայացված Armeps կայքի քաղվածքից երևում է որ գաղտնաբառը արգելափակվում է 10 փորձից հետո, որի պարագայում հիմնազուրկ է այն փաստարկը որ Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կայք-էջի գաղտնաբառը արգելափակվել է 14-րդ փորձի արդյունքում: Բացի դա, ուսումնասիրելով աուդիտ հաշվետվությունը, պարզվում է, որ ըստ այդ հաշվետվության նշված 14 փորձից 13-ը արձանագրվել է ժամը՝ 20:57 ժամանակահատվածում, այսինքն՝ մեկ րոպեում՝ 60 վայրկյանում 13 անգամ մուտքագրվել է գաղտնաբառը: Այստեղ անհավանականն այն է, որ անձի կողմից գաղտնաբառ հավաքելու և էկրանին հայտնված հաղորդագրությունը կարդալու և դրանից հետո 2-րդ անգամ փորձել գաղտնաբառը հավաքելու համար նվազագույն դեպքում անհրաժեշտ է 10-ից 20 վայրկյան, հետևաբար նշված՝ 20:57 ժամանակահատվածում հնարավոր է կատարել անհաջող փորձ 3-ից 6 անգամ: Նշված հանգամանքով ակնհայտ է, որ համակարգը այդ պահին չի աշխատել, որի արդյունքում Ա/Ձ-ի կողմից կայք-էջ մուտք գործելու առաջին իսկ փորձի դեպքում գաղտնաբառը արգելափակվել է:

Բողոքը քննող անձի կողմից ընդհանրապես անտեսվել է այն փաստարկը, թե ինչու է գաղտնաբառի արգելափակման դեպքում անմիջապես էկրանին հայտնվել «Ձեր հաշիվը փակված է: Խնդրում ենք դիմել համակարգչային անդմինիստրատորին info@armeps.am» հաղորդագրությունը, եթե իրականում առաջացած խնդրի համար պետք է նամակը ուղարկվեր secretariat@minfin.am էլեկտրոնային հասցեին, այլ ոչ թե՝ info@armeps.am»:

31.08.2018թ. Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանը զանգահարել է էլեկտրոնային գնումների բաժին, որտեղ վերջինիս պատասխանել են, որ ընդհանուր բաժնի միջոցով պարզաբանում ստանա առ այն, թե ինչու նամակին որևէ ընթացք չի տրվել երկու օր անց: Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանը թեժ գիծի օպերատորին բացատրել է խնդիրը, վերջինս հայտնել է քարտուղարության համարը, որտեղ պատասխանել են, որ այդ հարցը լուծում է էլեկտրոնային գնումների բաժինը և info@armeps.am էլեկտրոնային հասցեի նամակներին իրենք չեն պատասխանում: Հերթական անգամ Ա/Ձ-ն զանգահարել է էլեկտրոնային գնումների բաժին, որտեղ միայն երկու օր անց հայտնել են, որ էլեկտրոնային նամակը պետք է ուղարկվեր secretariat@minfin.am էլեկտրոնային հասցեին, այլ ոչ թե՝ info@armeps.am:

Նշված օրը Ա/Ձ-ն տեղեկացել է նաև, որ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդ այդ օրը կայացել է աճուրդը և առկա է աճուրդը հաղթող մասնակից:

Հաշվի առնելով վերոգրյալը Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանը գտնում է, որ 31.08.2018թ. ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով կայացած աճուրդը այս փաստով ևս պետք է ճանաչել անվավեր, քանի որ գնումներ իրականացնող մարմնի սխալ ուղորդման և անգործության հետևանքով զրկվել է աճուրդին մասնակցելու իրավունքից:

Գրության մեջ նշված այն փաստարկը, որ 30.08.2018թ. Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանին հեռախոսազանգով տրվել է սպառիչ պատասխան, ապա այս փաստարկը նույնպես հիմնազուրկ է, քանի որ այդ օրը «սպառիչ պատասխան» չի տրվել:

Բացի դա, Գրությանը կից ներկայացվել են՝ 29.08.2018թ., 03.09.2018-04.09.2018թթ. աուդիտ հաշվետվությունները, սակայն, չգիտես ինչու, չի ներկայացվել Բողոքի առարկա հանդիսացող 31.08.2018թ. կայացած էլեկտրոնային աճուրդի օրը կայք-էջ կատարված անհաջող փորձերի վերաբերյալ աուդիտ հաշվետվությունը: Ավելին, այդ աուդիտ հաշվետվություններում առկա ՊՊ-ներ բաժնում նշված է «ՀՀ Արարատի մարզ, Այգեստանի գյուղապետարան»: Այս նշումն ինչ կապ և առնչություն կամ ապացուցողական նշանակություն ունի Ա/Ձ-ի կողմից Armeps կայքով մուտք գործելու 14 անհաջող փորձերի հետ:

Գրության մեջ հիմնավորող փաստարկ վկայակոչել է հետևյալը. «Ի պատասխան Ձեր 06.09.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված դիմում-գրության հիման վրա arbak2000@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով 06.09.2018թ. Ժամը 16:10 ուղարկվել է նոր գաղտնաբառ, մուտքանուն և գրանցման գործարքային համար, որոնք 14.09.2018թ. Ժամը 10:50 դրությամբ դեռևս չեն գործածվել կայք-էջը ակտիվացնելու համար:»:

Նախևառաջ՝ 03.09.2018թ. Բողոքով բողոքարկվել է ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդը, որին Ա/Ձ-ն չի կարողացել մասնակցել 29.08.2018թ. կայք-էջի գաղտնաբառը արգելափակվելու հետևանքով: Հետևաբար Բողոքին ի պատասխան Ձեր կողմից օրենքով սահմանված կարգով կայացվող գրավոր որոշման մեջ վկայակոչվող պատճառաբանությունները բացառապես պետք է վերաբերվեն Բողոքի բուն առարկային, այլ ոչ թե սովորական գրությամբ ներկայացնել պատճառաբանություններ, որոնք առնչություն չունեն բողոքարկվող փաստերի հետ:

Երկրորդ՝ դիմումը մուտք է եղել 05.09.2018, այ ոչ թե 06.09.2018թ., իսկ Ձեր 06.09.2018թ. info@armeps.am-ից arbak2000@mail.ru-ին ուղարկված նամակում «նոր գաղտնաբառ» առկա չի եղել, որի արդյունքում էլ առ այսօր կայք-էջը ակտիվացնելու համար հնարավորություն չի եղել:

ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ)» ծածկագրով էլեկտրոնային աճուրդն օրենքի պահանջի խախտմամբ իրականացնելու վերաբերյալ փաստարկներին ի պատասխան Գրության մեջ նշվել է, որ գնման առարկան 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման թիվ 2 հավելվածում ներառված է «կնիքի սարք» ընդհանրական առումով, և որ գնման առարկան ներառված է նաև www.gnumner.am կայքի «Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող գնման առարկաների թվային ծածկագրեր (CPV կոդեր)» բաժնում հրապարակված ցուցակում:

Նշված փաստարկները նույնպես անհիմն են հետևյալ պատճառաբանություններով.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումն իրականացվում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, եթե գնման առարկան ներառված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում:

ՀՀ Կառավարության կողմից 18.05.2017թ. ընդունված թիվ 534-Ն որոշման համաձայն՝ հաստատվել է էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը:

Ձեր այն փաստարկը, թե կնիքի (կամ դրոշմակնիք) պատրաստման գնման առարկան ընդհանրական ներառված է ՀՀ Կառավարության կողմից 18.05.2017թ. ընդունված թիվ 534-Ն որոշման թիվ 2 հավելվածի ապրանքների ձեռքբերման բաժնում նշված «կնիքի սարք» գնման առարկայում, ապա հայտնում եմ, որ կնիքների արտադրումը աշխատանքների ձեռք բերում է, այլ ոչ թե ապրանքների ձեռք բերում, որի նկատառումով էլ էլեկտրոնային աճուրդին տրվել է ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) համարի ծածկագիրը, քանի որ հաղթող մասնակցի հետ կնքվում է կապալի պայմանագիր, մինչդեռ նշված որոշման թիվ 2

հավելվածի աշխատանքների բաժնում կնիքների կամ դրոշմակնիքների արտադրման աշխատանքների կատարում առկա չէ:

Ավելին, անհատական հատկանիշներ ունեցող և արտադրության պրոցեսով պատրաստվող գույքը՝ կնիքը «ընդհանրական» չի կարող ներառված լինել ապրանքների ձեռք բերման բաժնում նշված «կնիքի սարք» գնման առարկայում այնքանով, որ կնիքի սարքը հանդիսանում է հիմնական գույքը՝ արտադրված կնիքը օգտագործելու լրացուցիչ գույք, որոնք չունեն որևէ ընդհանրականցվելու կամ նույնականացվելու հատկանիշներ և հետևաբար չէր կարող հիմնական գույքը «ընդհանրական» ներառվել լրացուցիչ գույքում:

Ավելին, հաշվի առնելով այն կարևորագույն տարբերակող հատկանիշը, որ կնիքի սարքը կարող է գնվել ցանկացած անձի կողմից՝ առանց որևէ սահմանափակման, իսկ կնիքը կամ դրոշմակնիքը արտադրվում է բացառապես կոնկրետ պատվիրատուի պատվերի հիման վրա և պարունակում է այդ պատվիրատուի անհատականացնող տվյալները, ապա այս հանգամանքով անառարկելիորեն բացառվում է այն փաստարկը, որը հիմնված է լոկ ենթադրության և հարմարավետության հիման վրա, մինչդեռ այն պետք է բխեր Օրենքի պահանջից:

Այսպիսով, վերը նշված հանգամանքներով հաստատվում է, որ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման առարկան ներառված չլինելով ՀՀ Կառավարության կողմից 18.05.2018թ. ընդունված թիվ 534-Ն որոշմամբ հաստատված ցուցակում, ըստ Օրենքի պահանջի, չէր կարող տվյալ գնումն անցկացվեր էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով գնումն իրականացվում է բացառապես, եթե գնման առարկան ներառված է ՀՀ Կառավարության 18.05.2018թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատած էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում:

Ինչ վերաբերում է www.gnumner.am կայքի «Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող գնման առարկաների թվային ծածկագրեր (CPV կոդեր)» բաժնում հրապարակված ցուցակին, ապա դա հակասում է Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության կողմից 18.05.2017. թիվ 534-Ն որոշմանը, իսկ հակասության դեպքում նախապատվությունը տրվում է ավելի բարձր իրավաբանակ ուժ ունեցող ակտին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օերենքի 40-րդ հոդվածի համաձայն՝

1. Նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝

1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը.

2) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը.

3) ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը.

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Նորմատիվ ակտերը, այդ թվում ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումները ընդունվում են ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի (որոշակության սկզբունք) իմպերատիվ պահանջների պահպանմամբ, ուստի անհատական հատկանիշներ ունեցող և արտադրական պրոցեսով ստացվող գույքը ՀՀ կառավարության կողմից ուղղակիորեն կարտացոլվեր հիշատակված հավելվածի աշխատանքների բաժնում, եթե այդ գույքի ձեռքբերման համար գնման ընթացակարգը սահմանավեր էլեկտրոնային աճուրդով:

Ավելին նորմատիվ ակտերում սահմանված դրույթներն ինքնանապատակ չեն և ունեն բովանդակային կիրառման կոնկրետ նպատակ, ուստի գտնում եմ, որ սույն գնման առարկան ձեռք բերելու նպատակով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի կիրառելով ակնհայտ կոպիտ կերպով խախտվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ գնումն իրականացվում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, եթե գնման առարկան ներառված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում, իսկ ՀՀ Կառավարության կողմից 18.05.2017թ. ընդունված թիվ 534-Ն որոշման 2-րդ հավելվածի աշխատանքների ձեռքբերման բաժնում այդպիսիք առկա չէ:

Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանը բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է՝ անվավեր ճանաչել 31.08.2018թ. կայացած ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդը:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից լիազորված ներկայացուցիչ Արմինե Հովհաննիսյանը:

2. <u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով Բողոքներ քննող անձը դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով՝ նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի լիազորված ներկայացուցիչ Գոռ Մանուկյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/99 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից 26.10.2018թ ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.10.2018թ. Բողոքներ քննող անձին տրամադրած թիվ 26-1/[1261791]-18 գրությունը, armeps.am համակարգից արտատպված աուդիտի հաշվետվությունները.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կնիքների և դրոշմակնիքների պատրաստման ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Բողոքներ քննող անձը Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից լիազորված ներկայացուցչի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ բողոքում նշված այն հիմնավորումները և եզրահանգումները, որ Բողոքներ քննող անձին ուղղված 03.09.2018թ. Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից ներկայացված դիմում-բողոքի քննությունը իրականացվել է Օրենքի պահանջի ակնհայտ կոպիտ խախտմամբ, այն է՝ դիմում-բողոքի վերաբերյալ չի կայացվել պատճառաբանված գրավոր որոշում, դիմում-բողոքի քննության նպատակով չի հրավիրվել նիստ և դրան մասնակից չեն դարձվել կողմերը, հետևաբար Ա/Ձ-ն զրկված է եղել իր տեսակետները ներկայացնելու և հիմնավորելու օրենքով վերապահված իրավունքից,

անհիմն են, քանի որ նշված բողոքը հասցեագրված չի եղել Բողոքներ քննող անձին, իսկ բողոք ներկայացնելու ընթացակարգը սահմանված է «Գնումների մասին» ՀՀ օրենքով, հետևաբար այն մեծ ցանկության դեպքում էլ չէր կարող ընդունվել և քննվել Բողոքներ քննող անձի կողմից:

Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից լիազորված ներկայացուցչի կողմից ընդունվեց այն փաստը, որ 03.09.2018թ. Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից ներկայացված դիմում-բողոքը հասցեագրված չի եղել Բողոքներ քննող անձին:

Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից լիազորված ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանը ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով՝ «gayan1980» մուտքանունով 29.08.2018թ փորձել է մուտք գործել armeps.am համակարգ, սակայն առաջին իսկ փորձի արդյունքում համակարգը ավտոմատ ապաակտիվացրել է Ա/Ձ-ի կայք-էջը, որից հետո էկրանին հայտնվել է «Ձեր հաշիվը փակված է: Խնդրում ենք դիմել համակարգչային ադմինիստրատորին info@armeps.am» հաղորդագրությունը:

Նշված հացեով Ա/Ձ-ի կողմից ուղարկվել է նամակ առաջացված խնդրի վերաբերյալ, սակայն պատասխան չի ստացվել: Այնուհետև Ա/Ձ-ն զանգահարել է էլեկտրոնային գնումների բաժին, որտեղ վերջինիս հայտնել են, որ նամակը պետք է ուղարկվեր secretariat@minfin.am էլ. փոստի հասցեին այլ ոչ թե՝ info@armeps.am: Դրանից հետո Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանին ներկայացվել է աուդիտ հաշվետվություն, որում արձանագրված է, որ Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից armeps.am համակարգ 14 մուտքի փորձ է արվել, որից հետո կայք-էջը արգելափակվել է, սակայն ըստ բողոքաբերի պնդման կայք-էջը արգելափակվել է առաջին իսկ փորձից հետո:

Ա/Ձ-ի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ)» ծածկագրով էլեկտրոնային աճուրդն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ՝ գնման առարկան ներառված չէ ՀՀ Կառավարության կողմից 18.05.2018թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված ցուցակում:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյո՞ք կարող են ներկայացնել որևէ ապացույց այն մասին, որ Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կայք-էջը արգելափակվել է անմիջապես առաջին իսկ փորձից հետո, Ա/Ձ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ նման ապացույց տրամադրել չեն կարող:

Բողոքներ քննող անձը 04.10.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը խնդրելով տալ տեղեկատվություն այն մասին, թե որ էլ. փոստի հասցեին

պետք է ուղարկվեր հաղորդագրությունը, քանի անգամ է Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյան մուտք գործել armeps.am համակարգ, որն է հանդիսացել Ա/Ձ-ի կայք-էջի արգելափակման պատճառը, ի՞նչ ձևով և ինչպիսի՞ ժամկետներում կարող էր Ա/Ձ-ն վերականգնել կայք-էջ մուտք գործելը, և եթե գնման առարկան ներառված չէ ՀՀ Կառավարության կողմից 18.05.2018թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված ցուցակում կարո՞ղ էր արդյոք ընթացակարգը անցակցվել էլեկտրոնային աճուրդի միջոցով:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի 04.10.2018թ. գրության ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.10.2018թ. 26-1/[1261791]-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գայանե Կիրակոսյան Ա/Ձ (այսուհետ՝ Ա/Ձ) օգտատիրոջ «gayan1980» մուտքանունով 29.08.2018թ. ժամը 20:57-ից մինչև 29.08.2018թ. ժամը 21:00-ն Armeps համակարգը արձանագրել է անհաջող մուտքի 14 փորձ, որի արդյունքում համակարգը ավտոմատ ապաակտիվացրել է «gayan1980» օգտատիրոջ կայք-էջը: 30.08.2018թ. Ա/Ձ-ի առաջին իսկ զանգին տրվել է սպառիչ պատասխան՝ նոր գաղտնաբառ տրամադրելու համար՝ ՀՀ ֆինանսների նախարարություն դիմում-գրություն ներկայացնելու վերաբերյալ: Առաջին իսկ զանգից Ա/Ձ-ին հայտնի է եղել, որ հեռախոսազանգով կամ որևէ էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով էլեկտրոնային հաղորդագրությամբ՝ առանց կցագրված ֆայլ-գրության, նոր գաղտնաբառ չի տրամադրվում, ուստի և նույն օրն իսկ, հնարավորություն է ունեցել պատրաստել և ուղարկել իր կողմից կնքված և ստորագրված դիմում-գրությունը: Արդեն ապաակտիվացված օգտատիրոջ մուտքանունով 03.09.2018թ. մինչև 04.09.2018թ. իրականացվել է ևս 5 անհաջող մուտքի փորձ:

Ի պատասխան Ա/Ձ-ի 06.09.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրած դիմում-գրության հիման վրա arbak2000@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով 06.09.2018թ. ժամը 16:10-ին ուղարկվել է նոր գաղտնաբառ, մուտքանուն և գրանցման գործարքային համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ մրցույթների անցկացման պայմանները սահմանվում են հրավերներով և մասնակիցները էլեկտրոնային համակարգերում գործողությունները պետք է իրականացնեն սահմանված պայմաններին և www.procurement.am հասցեով գործող կայքում հրապարակված էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների, Armeps էլեկտրոնային գնումների համակարգի օգտագործողի «Տնտեսական օպերատորի» և էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ուղեցույցներին համապատասխան: Մասնավորապես, Armeps էլեկտրոնային գնումների համակարգի օգտագործողի «Տնտեսական օպերատորի» ուղեցույցի «Սխալ մուտքագրման ուղերձ» բաժնի համաձայն՝

եթե գործածողը ավելի քան 10 անգամ մուտքագրում է գործածողի սխալ անուն կամ գաղտնաբառ, ապա նրա հաշիվը ինքնաբերաբար ապաակտիվացվում է: Այս դեպքում գործածողը պետք է դիմի համակարգի ադմինիստրատորին՝ հաշիվը վերաակտիվացնելու համար: Բացի այդ, գնման ընթացակարգերի հրավերների համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգերում հարցեր կամ խնդիրներ առաջանալիս անհրաժեշտ է դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեով (հեռախոս՝(+37411) 28-93-20): Այսինքն՝ հաշիվը վերաակտիվացնելու համար ընկերությունը պետք է թղթային կամ նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով նախարարություն ներկայացներ դիմում-գրությունը, որի մասին Ա/Ձ-ին տեղեկացվել է առաջին իսկ զանգից:

Ինչ վերաբերվում է գրությամբ նշված գնման առարկաները ՀՀ կառավարության 18/05/2017թ. «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշման N2 հավելվածով հաստատված ցուցակում ներառված չլինելուն՝ հայտնում ենք, որ վերջիններս նշված ցուցակում ներառված են «կնիքի սարք» ընդհանրական անվանումով, ավելին՝ 30192150 ԳՄԱ կոդով «կնիքներ» և 30192157 ԳՄԱ կոդով «դրոշմակնիքներ» գնման առարկաները ներառված են գնումների պաշտոնական տեղեկագրի՝ www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող գնման առարկաների թվային ծածկագրեր (CPV կոդեր)» բաժնում հրապարակված ցուցակում:»:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կնիքների և դրոշմակնիքների պատրաստման ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ) ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված է հետևյալը.

«Միաժամանակ - հայտը էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am համակարգ մուտքագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված ձեռնարկով:»:

Armeps էլեկտրոնային գնումների համակարգի օգտագործողի «Տնտեսական օպերատորի» ուղեցույցի «2.4.Մուտքագրում պլատֆորմ» բաժնում սահմանված է հետևյալը.

- եթե օգտվողը տրամադրում է ոչ ճիշտ լիազորություն (կամ մականուն կամ նշանաբառ), ապա կցուցադրվի սխալի ուղերձ.

- եթե օգտվողը ավելի քան 10 անգամ տրամադրում է ոչ ճիշտ նշանաբառ կամ մականուն, ապա օգտվողի հաշիվը ինքնաբերաբար կապաակտիվացվի: Այս դեպքում՝

օգտվողը պետք է դիմի Համակարգի Ադմինիստրատորին հաշիվը վերաակտիվացնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումն իրականացվում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, եթե գնման առարկան ներառված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում:

«Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների» ցուցակում գնման առարկան ներառված է՝ «կնիքի սարք» ընդհանրական անվանումով:

www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող գնման առարկաների թվային ծածկագրեր (CPV կոդեր)» բաժնում՝ «կնիքներ» և «դրոշմակնիքներ» գնման առարկաները նույնպես ներառված են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- armeps.am համակարգի աուդիտի հաշվետվությունների համաձայն Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից 29.08.2018թ. մուտքի 14 անհաջող փորձ է արվել:

- Armeps էլեկտրոնային գնումների համակարգի օգտագործողի «Տնտեսական օպերատորի» ուղեցույցի համաձայն՝ օգտատիրոջ կայք-էջը ապաակտիվանում է 10 անահջող փորձից հետո:

- Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ Ա/Ձ-ի կայք-էջը արգելափակվել է առաջին իսկ փորձից:

- Ընթացակարգով գնման ենթակա առարկաները ներառված են՝ «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների» ցուցակում:

- Ընթացակարգով գնման ենթակա առարկաները ներառված են՝ www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող գնման առարկաների թվային ծածկագրեր (CPV կոդեր)» բաժնում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը հաշվի առնելով այն հանգամանքը Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանը չներկայացրեց որևէ ապացույց այն մասին, որ վերջինիս կայք-էջը արգելափակվել է առաջին իսկ փորձից, ինչպես նաև armeps.am համակարգի աուդիտի

հաշվետվությունները, և համաձայն Armeps էլեկտրոնային գնումների համակարգի օգտագործողի «Տնտեսական օպերատորի» ուղեցույցի այն սահմանմանը, որ համակարգի օգտատիրոջ կայք-էջը ապաակտիվանում է 10 անահջող փորձից հետո, գտնում է, որ Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի բողոքով ներկայացված փաստարկներն անհիմն են:

Ինչ վերաբերում է բողոքում նշված այն հանգամանքին, որ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-(18/1-Կ)» ծածկագրով էլեկտրոնային աճուրդն իրականացվել է օրենքի պահանջի խախտմամբ՝ գնման առարկաները ներառված չեն ՀՀ Կառավարության կողմից 18.05.2018թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված ցուցակում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված փաստարկն ևս անհիմն է, քանի որ գնման առարկաները ներառված են «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների» ցուցակում, ինչպես նաև www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող գնման առարկաների թվային ծածկագրեր (CPV կոդեր)» բաժնում:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ա/Ձ Գայանե Արշակի Կիրակոսյանի կողմից 26.10.2018թ ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**